ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 64-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ , 101 րդ հոդվածների պահանջները և հիմք ընդունելով Գեղամ Մկրտչյանի, Անահիտ Ադիբեկյանի, Նարինե Ադիբեկյանի և Լիա Համբարձումյանի 2019 թվականի օգոստոսի 26-ի նրանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից / սեփ. վկ. 08082019-07-0036 և սեփ.վկ. 19082019-07-0075/ հրաժարվելու մասին դիմումը

Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացիներ՝ Գեղամ Աղվանի Մկրտչյանին, Անահիտ Շմավոնի Ադիբեկյանին, Նարինե Գեղամի Ադիբեկյանին և Լիա Գեղամի Համբարձումյանին Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0,438 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 07-033-0217-0045, սեփականության վկայական N 19082019-07-0075/ և 0,576 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 07-033-0217-0038, սեփականության վկայական N08082019-07-0036/ վարելահողերը ճանաչել համայնքային սեփականություն՝ համաձայն դիմումի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2019 թ. սեպտեմբերի 02
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 65-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝/ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ԼԵՎԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԳԱՅԱՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ՎԵՐՈՆԻԿԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՌԻՏԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԼԻԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԾԻՐԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ≤<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով համասեփականատեր Գայանե Գրիգորյանի 2019 թվականի սեպտեմբերի 4 - ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչներ՝ /հանգուցյալ/ Լևիկ Մարտիրոսյանին, Գայանե Գրիգորյանին, /հանգուցյալ/ Վերոնիկա Մարտիրոսյանին, Ռիտա Մարտիրոսյանին, Լիանա Մարտիրոսյանին, Ծիրանուշ Մարտիրոսյանին և Աննա Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքում գտնվող բնակելի տանը /սեփ վկայական N 1619672/ տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 11-րդ թաղամաս 27 տուն:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 _19թ. սեպտեմբերի 4
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 66-Ա

ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՅԿ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԵԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայկ Նոյեմբերի Համբարձումյանի և Կարինե Վարազդատի Եգորյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում կադաստրային քարտեզագրման արդյունքում Հայկ Համբարձումյանին և Կարինե Եգորյանին հատկացված հողամասից նրանց կողմից ավել փաստացի օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ <<Հողային օրենսգրքի>> 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Հայկ Նոյեմբերի Համբարձումյանի և Կարինե Վարազդատի Եգորյանի սեփականության իրավունքները ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0090-0011 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,244744 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ, որը փաստացի օգտագործվել է նրանց կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Հողամասի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Հայկ Նոյեմբերի Համբարձումյանին և Կարինե Վարազդատի Եգորյանին Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում գտնվող, նրանց պատկանող հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 16:
4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել Հայկ Նոյեմբերի

Համբարձումյանի և Կարինե Վարազդատի Եգորյանի սեփականության իրավունքներն ամրագրված հողամասի նկատմամբ ու տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 19թ. սեպտեմբերի 5
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 67-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Արտեզիա>> ՍՊԸ-ին տալ շինարարության թույլտվություն՝ Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող, Լեռնանիստ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում խմելու-կենցաղային նպատակով նախատեսվող 1 (մեկ) խորքային հորատանցքի հորատման աշխատանքները կատարելու համար:

2. Պարտավորեցնել <<Արտեզիա>> ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Միրզախանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ <<Արտեզիա>> ՍՊԸ-ի տնօրեն Հովիկ Միրզախանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019 թ. սեպտեմբերի 9
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 68-Ա

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով, և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 3-ի N 36-Ա որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի շենքում (հասցե՝ Լեռնանիստ համայնք, 1-ին փողոց 52 շենք) 2019 թվականի հոկտեմբերի 15-ին՝ ժամը 11:00-ին անցկացնել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողամասի աճուրդ-վաճառք:

Աճուրդային կարգով օտարման է ներկայացվում Լեռնանիստ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության վարելահող.
1 լոտ գյուղատնտեսական նշանակության 2.4904 հա մակերեսով վարելահող, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 30082019-07-0086, (կադաստրային ծածկագիր՝ 07-033-0206-0050), մեկնարկային գինը 2.4904 հա մակերեսով վարելահողի համար՝ 3629758 (երեք միլիոն վեց հարյուր քսանինը հազար յոթ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ:
Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (սերվիտուտներ) չկան:

Աճուրդին մասնակցելու համար հայտերն ընդունվում են մինչև 2019 թվականի հոկտեմբերի 11-ը:

2. Հանձնարարել Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հովհաննես Մարգարյանին օրենքով սահմանված կարգով տալ նշված հողամասի աճուրդ-վաճառքի հայտարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 12
Լեռնանիստ համայնք